ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր Կորյուն Աթոյանի ելույթը «Լավագույն ուսանող 2017» մրցանակաբաշխությանը

Հարգարժան պարոն Մարգարյան,

Պարոն Ավագյան

Շնորհակալ ենք Ձեզ՝ մեր համալսարանի այս տարվա լավագույն ուսանողին ընտրելու այս պատասխանատու օրը մեր կողքին լինելու համար:

Նոյեմբեր ամիսը ինչպես մեր հանրապետությունում, այնպես էլ մեր բուհում, առանձնանում է ուսանողական և երիտասարդական աշխույժ նախաձեռնություններով, որոնց նպատակը ոչ միայն Երիտասարդության և Ուսանողության համաշխարհային տոները նշելն է, այլև մեր պետության երիտասարդ սերնդին արժևորելն ու արժանին մատուցելը: Այս տոների առթիվ իմ ամենամյա ուղերձներում ես իմ հիացմունքն ու հպարտությունն եմ արտահայտում ձգտող ու որոնող, հաղթահարող ու կայացող երիտասարդության հանդեպ:

Սիրելի երիտասարդներ

Դուք մեր ապագան եք, ձեզ է ուղղված մեր հավատն ու սպասումը, մեր նվիրական իղձերը, ու ավարտին չհասցրած ձեռնարկումները ձեզ են ժառանգված: Ձեր ձգտումներն ու կառուցողականությունը պետք է ամուր հիմքեր ունենան, ասել է թե՝ պետք է խարսխվեն բարձրորակ կրթության ու մարդկային վսեմ հատկանիշների վրա, պետք է լինեք իսկապես ուսյալ ու մեծ մտահորիզոնի տեր, հայրենասեր ու հայրենատեր, բարի ու մարդասեր: Ձեր ծնողները անձնվիրաբար ձեզ կրթության են տալիս, որպեսզի դուք կառուցեք ոչ միայն ձեր ապահով ու երջանիկ կյանքը, այլև մեր երկրի բարենորոգ ապագան:

Շուրջ մեկ ամիս է՝ Ուսանողական խորհրդի և Հայաստանի երիտասարդական հիմնադրամի նախաձեռնությամբ մեր համալսարանում հայտարարվել է «Լավագույն ուսանող» մրցույթը՝ 5 անվանակարգերում, և այսօր մենք պատիվ ունենք հանրության հայտնելու այդ ուսանողների անունները: Ինձ հնարավորություն է ընձեռված հայտնելու գիտական գործունեությամբ աչքի ընկած լավագույն ուսանողի անունը, իսկ մինչ այդ ևս մեկ անգամ ցանկանում եմ շնորհավորել մեր ուսանողներին և ցանկանալ նորանոր նվաճումներ:

ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ